# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

**«30» ապրիլի 2015 թվական N 61-Ա**

## 2015 ԹՎԱԿԱՆԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2015 թվականի ապրիլին գյումրեցի ծանրորդ Տիգրան Գևորգի Մարտիրոսյանը Թբիլիսի քաղաքում կայանալիք Եվրոպայի մեծահասակների ծանրամարտի առաջնությունում գրավեց 1-ին տեղը, Կարապետ Չալյանը Լեհաստանում մինչև 23 տարեկան հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի առաջնությունում գրավեց 3-րդ տեղը, իսկ Սերբիայում կայացած սամբոյի երիտասարդների և պատանիների առաջնության ժամանակ սամբիստները նվաճեցին՝ երիտասարդները 2 արծաթե մեդալներ, իսկ պատանիները 1 բրոնզ:

Գյումրեցի մարզիկներին և նրանց մարզիչներին խրախուսելու նպատակով, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. 2015 թվականին Եվրոպայի ծանրամարտի, հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի և սամբոյի առաջնություններում չեմպիոններ և մրցանակակիրներ դարձած մարզիկներին և նրանց մարզիչներին շնորհել դրամական պարգևներ 1.800.000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4727) <<Սպորտային պարգևներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

| **Կողմ (14)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ(0)** |
|---|---|---|

Ա. Ադամյան ____________

Ա. Բաղդամյան ____________

Ա.Գրիգորյան ____________

Վ.Եդիգարյան ____________

Գ.Թաթարյան ____________

Հ. Խաչատրյան ____________

Հ. Կարապետյան

Տ.Հովհաննիսյան

Ն. Մեսրոպյան

Ռ.Մխիթարյան

Է. Մկրտչյան

Վ.Շիրինյան

Ե. Պողոսյան

Մ. Սահակյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**

**«30» ապրիլի 2015 թ.**

**Հավելված**
Գյումրի համայնքի ավագանու
2015 թվականի ապրիլի 30-ի
N 61-Ա որոշման

**ՑՈՒՑԱԿ**

**2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼ ԱՄՍԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԵԴԱԼՆԵՐ ՆՎԱՃԱԾ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻ**

1. Մարտիրոսյան Տիգրան-ծանրամարտի Եվրոպայի առաջնություն, I տեղ-1.000.000 ՀՀ դրամ,
2. Եղոյան Հարություն-ծանրամարտի մարզիչ, 200.000 ՀՀ դրամ,
3. Չալյան Կարապետ-հունա-հռոմեական ոճի ըմբշամարտ, մինչև 23 տարեկանների առաջնության III տեղ, 150.000 ՀՀ դրամ,
4. Պետրոսյան Արթուր- հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի մարզիչ, 50.000 ՀՀ դրամ,
5. Նազարյան Միշա- սամբոյի Եվրոպայի երիտասարդների առաջնության II մրցանակակիր, 100.000 ՀՀ դրամ,
6. Խաչատրյան Դավիթ- սամբոյի մարզիչ, 50.000 ՀՀ դրամ,
7. Սարգսյան Վոլոդյա- սամբոյի Եվրոպայի երիտասարդների առաջնության II մրցանակակիր, 100.000 ՀՀ դրամ,
8. Սիմոնյան Կարեն-սամբոյի մարզիչ, 50.000 ՀՀ դրամ ,
9. Սահակյան Գրիգոր- սամբոյի Եվրոպայի պատանիների առաջնության III մրցանակակիր, 70.000 ՀՀ դրամ,
10. Սարգսյան Մարտին- սամբոյի մարզիչ, 30.000 ՀՀ դրամ:

Ընդամենը 1.800.000 ՀՀ դրամ

Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի

Ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ՝ Մ.Ղազարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«30» ապրիլի 2015 թվական N 62–Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՍԱՄԲՈ-ՁՅՈՒԴՈՅԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՓԼՎԱԾ ՊԱՐՍՊԻ ՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2015 թվականի գարնան ձնհալի պատճառով փլվել է Գյումրի համայնքի <<Սամբո-ձյուդոյի մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզադաշտի պարիսպը իր ամբողջ երկարությամբ: Պահանջվում է պարսպի անհապաղ նորոգում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի ներկայացրած նախահաշիվը՝ համայնքի **ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի <<Սամբո-ձյուդոյի մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 420.000 (չորս հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ փլված պարսպի նորոգման նպատակով պահանջվող շինարարական նյութեր ձեռք բերելու համար՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ____________

Ա. Բաղրամյան ____________

Ա.Գրիգորյան ____________

Վ.Եդիգարյան ____________

Գ.Թաթարյան ____________

Հ. Խաչատրյան

Հ. Կարապետյան

Տ.Հովհաննիսյան

Ն. Մեսրոպյան

Ռ.Մխիթարյան

Է. Մկրտչյան

Վ.Շիրինյան

Ե. Պողոսյան

Մ. Սահակյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱՂԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«30» ապրիլի 2015 թ.**

**Հավելված**
Գյումրի համայնքի ավագանու
2015 թվականի ապրիլի 30-ի
N 62-Ա որոշման

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

**ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍԱՄԲՈ- ՁՅՈՒԴՈՅԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՊԱՐՍՊԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ**

1. Ավազ- 12 խոր. մետր - 1 խոր/մ -6000դրամ x 12 + 16.000դրամ փոխ.- 88.000դր.
2. Քար - 100 հատ - 35.000դրամ
3. Ցեմենտ - 132.000 դրամ
4. Էլեկտրոդներ - 3 տուփ - 12.000 դրամ
5. Խողովակ – 25մ x 3000 - 75.000 դրամ
6. Կտրելու քար - 10հատ x 2000 - 20000դրամ
7. Ներկ – 3 կգ. -4.800x 10 - 48.000դրամ
8. Լուծիչ – 10 լիտր – 1000դր. - 10.000դրամ

---

Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը՝ 420.000 ՀՀ դրամ

Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի

Ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ՝ Մ.Ղազարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«30» ապրիլի 2015 թվական N 63–Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՇԻՆՎԵՐԱՆՈՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

2015 թվականի օգոստոսի 2-ից 13-ը համաշխարհային համահայկական 6-րդ խաղերի մինի ֆուտբոլի փուլերից մեկը անց է կացվելու Գյումրի քաղաքում՝ <<Արամ Սարգսյանի անվան Համալիր մարզադպրոցի>> մարզադահլիճում:

Մարզադահլիճը մրցումներին նախապատրաստելու, պատշաճ տեսքի բերելու համար անհրաժեշտ է կատարել շինվերանորոգման աշխատանքներ:

Ելնելով խնդրի լուծման անհրաժեշտությունից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի <<Արամ Սարգսյանի անվան Համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 930.000 (ինը հարյուր երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ մարզադպրոցի դահլիճի նորոգման, պատշաճ տեսքի բերման, համաշխարհային համահայկական 6-րդ խաղերի ծրագրով անցկացվող մինի ֆուտբոլի մարզաձևին համապատասխանեցնելու նպատակով պահանջվող շինարարական նյութեր ձեռք բերելու համար՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

| **Կողմ (14)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ(0)** |
|---|---|---|

Ա. Ադամյան ____________

Ա. Բաղրամյան ____________

Ա.Գրիգորյան ____________

Վ.Եդիգարյան ____________

Գ.Թաթարյան

Հ. Խաչատրյան

Հ. Կարապետյան

Տ.Հովհաննիսյան

Ն. Մեսրոպյան

Ռ.Մխիթարյան

Է. Մկրտչյան

Վ.Շիրինյան

Ե. Պողոսյան

Մ. Սահակյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**

**«30» ապրիլի 2015 թ.**

**Հավելված**
Գյումրի համայնքի ավագանու
2015 թվականի ապրիլի 30-ի
N 63-Ա որոշման

<<Արամ Սարգսյանի անվան համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզադահլիճի վերանորոգման համար պահանջվող շինանյութերի ցուցակ

1. Յուղաներկ-180լ------------------------------246.000 դրամ
2. Լուծիչ-60լ------------------------------60.000 դրամ
3. Ջրաէմուլսիոնի ներկ-20լ------------------------------11.000 դրամ
4. Ներկելու մեծ գլորակ-14 հատ------------------------------20.000 դրամ
5. Մեծ տարա ներկ բացելու համար-6 հատ------------------------------5.000 դրամ
6. Մեծ պլաստմասե աման ներկի գույն բռնելու համար-1 հատ------------------------------3.000 դրամ
7. Միջին մեծության վրձին-4 հատ տափակ, 2 հատ կլոր------------------------------4.000 դրամ
8. Մեծ ռուլոն շինարարական թղթե սկոչ-40 հատ------------------------------18.000 դրամ
9. Ձեռնոց-14 զույգ------------------------------3.000 դրամ
10. Էջմիածնի ավազ-16 պարկ------------------------------8.000 դրամ
11. Ցեմենտ-4 պարկ------------------------------10.000 դրամ
12. Բազալտե խիճ-1մ$^3$ ------------------------------8.000 դրամ
13. Ծեփամածուկ-10կգ ------------------------------4.500 դրամ
14. Սալիկի սոսինձ-3 պարկ------------------------------6.000 դրամ
15. Հատակի սալիկ-14 մ$^2$, 100 հատ մեծ խաչուկ------------------------------65.000 դրամ
16. ԴՎՊ-120 մ$^2$------------------------------27.000 դրամ
17. Պաստառ-120 մ$^2$------------------------------60.000 դրամ
18. Պաստառի կլեյ-4 տուփ------------------------------2.000 դրամ
19. Պենոպլաստ -4սմ –ոց,136 մ$^2$------------------------------88.400 դրամ
20. Դյուբլ մեխ 600մմ*4մմ -200 հատ------------------------------3.000 դրամ
21. Պոբեդիտի շաղափ 4մմ-2 հատ------------------------------1.000 դրամ
22. Երկաթե շաղափ -2 մմ-1 հատ------------------------------500 դրամ
23. Շինարարական մառլիա-5 հատ ------------------------------1.000 դրամ
24. Ցինկապատ պրոֆիլ 30 մմ*40մմ -110 մ------------------------------20.000 դրամ
25. Ցինկապատ պրոֆիլի կրանշտեյն -40մ-30 հատ------------------------------1.200 դրամ
26. Պլաստմասե կախովի առաստաղ-48 մ$^2$,40 մ անկյունակ------------------------------80.000 դրամ
27. 5-6 մմ գլխիկով,3մմ հաստ,, 10մմ երկար. ինքնակտրիճ-300 հատ---------------180.000 դրամ
28. Կոյուղու խողովակ պլաստմասե 50 սմ հաստռ., 60 սմ երկարությամբ-1 հատ-------550 դրամ
29. Կոյուղու խողովակ պլաստմասե 50սմ հաստ., 100սմ երկարությամբ-1 հատ---------550 դրամ
30. Կոյուղու անկյունակ պլաստմասե 50սմ հաստությամբ, 90$^0$ -3 հատ------------------1.800 դրամ
31. Կոյուղու տրապ մեծ-2 հատ------------------------------3.000 դրամ
32. Դռան բռնակ-14 հատ------------------------------14.000 դրամ
33. Դռան փական-2 հատ------------------------------7.000 դրամ
34. Պղնձյա մալուխ-2 ժիլ 4մմ-10մ------------------------------5.200 դրամ
35. Էլ. Անջատիչ-1 հատ------------------------------350 դրամ
36. Փակ պլաֆոն էլ.-4 հատ------------------------------9.200 դրամ
37. Ջրատաքացուցիչ տուրբո 1մ խողովակներով-1հատ------------------------------80.000 դրամ
38. ½ դույմ կապրոնե խողովակ տաք ջրի-12մ------------------------------5.000 դրամ
39. ¾ դույմ կապրոնե խողովակ տաք ջրի-30մ իզալացիա-26մ------------------------------17.000 դրամ
40. Կապրոնե անկյունակ ½ դույմ 90$^0$-16 հատ------------------------------600 դրամ
41. Կապրոնե անկյունակ ¾ դույմ 90$^0$ -10 հատ------------------------------600 դրամ
42. ½ դույմ կապրոնե անկյունակ 90$^0$ պերեխոդ. ներքին մետաղ ½ դույմ---------------------400 դրամ
43. ¾ - ½ դույմ կապրոնե միացման դետալ------------------------------50 դրամ
44. ¾ կապրոնե եռաբաշխիչ-4 հատ------------------------------400 դրամ
45. ½ կապրոնե եռաբաշխիչ- 4 հատ------------------------------300 դրամ
46. ¾ դույմ կապրոնե փական-1 հատ------------------------------ -600 դրամ
47. ½ կապրոնե փական – 1 հատ------------------------------600 դրամ
48. ¾ կապրոնե ֆիլտր-1 հատ------------------------------800 դրամ
49. Ջրատաքացուցիչի մասեր-3 հատ------------------------------4,500 դրամ
50. ¾ դույմ կապրոն մուֆտ-6 հատ------------------------------ 300 դրամ
51. ½ դույմ կապրոն մուֆտ – 2 հատ ------------------------------100 դրամ
52. Բաղնիքի ցնցուղ-4 կոմպլեկտ ------------------------------20.000 դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ 930.000 ՀՀ դրամ

Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի
Ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ՝ Ս.Ղազարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ու Մ

**«30» ապրիլի 2015 թվական N 64–Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Գյումրու համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընթացիկ վերանորոգումներ իրականացնելու, ինչպես նաև՝ գույքի ձեռքբերման անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների հիմնավորումները՝ (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի ապրիլի 21-ին, Դ/4466-15 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրու համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընթացիկ վերանորոգումներ իրականացնելու, ինչպես նաև գույք ձեռք բերելու նպատակով տրամադրել 7.000.000 (յոթ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ____________

Ա. Բաղրամյան ____________

Ա.Գրիգորյան ____________

Վ.Եդիգարյան ____________

Գ.Թաթարյան ____________

Հ. Խաչատրյան ____________

Հ. Կարապետյան ____________

Տ.Հովհաննիսյան

Ն. Մեսրոպյան

Ռ.Մխիթարյան

Է. Մկրտչյան

Վ.Շիրինյան

Ե. Պողոսյան

Մ. Սահակյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Մ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«30» ապրիլի 2015 թ.**

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

**Գյումրի համայնքի ավագանու**

**2015 թվականի ապրիլի 30- ի**

**N 64-Ա որոշման**

**ՑՈՒՑԱԿ**

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

| ՀՀ | ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑ (ՀՀ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 1. | «Ծիածան» ՀՈԱԿ | 400.000 |
| 2. | «Թռնիկ Մանուշակ» ՀՈԱԿ | 300.000 |
| 3. | «Ժպիտ» ՀՈԱԿ | 300.000 |
| 4. | «Արծագանք» ՀՈԱԿ | 300.000 |
| 5. | «Լիլիթ» ՀՈԱԿ | 300.000 |
| 6. | «Նանուլիկ» ՀՈԱԿ | 400.000 |
| 7. | «Լիանա» ՀՈԱԿ | 800.000 |
| 8. | «Արևիկ» ՀՈԱԿ | 600.000 |
| 9. | «Արարատ» ՀՈԱԿ | 300.000 |
| 10. | «Գոհար» ՀՈԱԿ | 300.000 |
| 11. | «Փարոս» ՀՈԱԿ | 300.000 |
| 12. | «Անի պարտեզ» ՀՈԱԿ | 200.000 |
| 13. | «Կարմիր գլխարկ» ՀՈԱԿ | 200.000 |
| 14. | «Հենզել և Գրետել» ՀՈԱԿ | 300.000 |
| 15. | «Սուրբ Մարիամ» ՀՈԱԿ | 400.000 |
| 16. | «Գյումրու մանկիկ» ՀՈԱԿ | 300.000 |
| 17. | «Ձյունիկ» ՀՈԱԿ | 200.000 |
| 18. | «Հուսո առագաստ» ՀՈԱԿ | 200.000 |
| 19. | «Երազանք» ՀՈԱԿ | 300.000 |
| 20. | «Անուլիկ» ՀՈԱԿ | 300.000 |
| 21. | «Ջանգակ» ՀՈԱԿ | 300.000 |
| | Ընդամենը | 7.000.000 |

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Հ. ՍՈՒԼԹԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ու Մ

**«30» ապրիլի 2015 թվական N 65–Ա**

**<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԳՅՈՒՄՐԻԻ ՈՒՍՈՒՄՆԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ 98 ԵՎ ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ 144 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել <<Հայաստանի Կույրերի Միավորում>> հաշմանդամների հասարակական կազմակերպության նախագահ Աբել Հակոբյանը՝ <<Հայաստանի Կույրերի Միավորման Գյումրիի ուսումնա-արտադրական ձեռնարկություն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան 98 և Մայակովսկու 144 հասցեներում գտնվող շենքերի և շինությունների 2015 թվականի գույքահարկի և հողի հարկի գումարների վճարումների նկատմամբ արտոնություններ սահմանելու խնդրանքով (դիմումը՝ քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի ապրիլի 3-ի N3648 թվագրմամբ):

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի <<ժ>> կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի <<Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել արտոնություն <Հայաստանի Կույրերի Միավորման Գյումրիի ուսումնա-արտադրական ձեռնարկություն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան 98 և Մայակովսկու 144 հասցեներում գտնվող շենքերի և շինությունների 2015 թվականի գույքահարկի և հողի հարկի գումարների վճարումների նկատմամբ՝ ազատելով համապատասխանաբար՝ 176.000 (մեկ հարյուր յոթանասունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ և 18.746 (տասնութ հազար յոթ հարյուր քառասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 194.746 (մեկ հարյուր իննսունչորս հազար յոթ հարյուր քառասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ____________

Ա. Բաղդամյան ____________

Ա.Գրիգորյան ____________

Վ.Եդիգարյան ____________________

Գ.Թաթարյան ____________________

Հ. Խաչատրյան ____________________

Հ. Կարապետյան ____________________

Տ.Հովհաննիսյան ____________________

Ն. Մեսրոպյան ____________________

Ռ.Մխիթարյան ____________________

Է. Մկրտչյան ____________________

Վ.Շիրինյան ____________________

Ե. Պողոսյան ____________________

Մ. Սահակյան ____________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք. Գյումրի**
**«30» ապրիլի 2015 թ.**